

ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԼԵՉՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ
ԽՏԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՑՔ
Օգոստոս 2025

Վենետիկի Պո-Արաքս Մշակութային Ընկերակցության, Վենետիկի “STUDIUM MARCIANUM” Հաստատության հետ գործակցաբար, կազմակերպած Հայ Լեզուի եւ Մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքը **տեղի պիտի ունենայ Օգոստոս 1-18: Քննությունները՝ Օգոստոս 18-ին: ԺԱՄԱՆՈՒՄ՝ Յ ու լ ի ս 3 1 -ին (արձանագրություններ), ՄԵԿՆՈՒՄ՝ Օգոստոս 19-ին:**

ԴԻՍՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԺԱՄ՝ Ապրիլ 30:

Դասընթացքը ունի չորս մակարդակ՝ բացարձակ սկսնակներէ մինչեւ յառաջադէմներ:

Դասերը տեղի կ'ունենան ամէն օր, **օրը հինգ պահ՝ առաւօտեան:**

Դասընթացքի տևողությունը յարանային ուսուցման 65 ժամէ կը բաղկանայ:

Դասերուն ներկայությունը **ՊԱՐՏԱԳԻՐ** է: Մասնակցութեան համար պահանջուած **նուազագոյն տարիքն է 18**, թէև դասընթացքի վարիչը կրնայ բացառել ծնողքին գրաւոր հաւանութեամբ: Դասերը տեղի կ'ունենան STUDIUM MARCIANUM-ի գլխաւոր շէնքին մէջ՝ <https://www.seminariovenezia.it/cms/galleria/il-seminario/>: Դիմումները պետք է կատարուին ԱՆՉԱՄԲ եւ ԳՐԱԲՈՐ, նշելով միշտ ՀԵՌԱԽՕՍԻ համար մը եւ ԵԼԳՐԱՅԻՆ (E-Mail) հասցէ մը:

Դասընթացքին զուգահեռ տեղի կ'ունենան մշակութային ձեռնարկներ՝ մասնագիտական դասախօսություններ (ծրագիրը յայտարարելի՝ գարնան վերջերը), վենետկեան այցեր, Վերափոխման Ս. Պատարագին եւ Խաղողօրհնէքին մասնակցություն Ս. Ղազարու Սայրավանքին մէջ: ՓԱՓԱԶՈՂՆԵՐՈՒՄ, կէսօրէ վերջերը, ՉՐԻԱԲԱՐ ՊԻՏԻ ԱԲԱՆԴՈՒԻՆ՝ ԴՈՒԴՈՒԿԻ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒ Դասեր:

Արձանագրութեան սակն է՝ 875 € կամ համապատասխանը՝ տարարժոյթով ըստ օրուան սակին:

10% զեղչ մը կը կատարուի անոնց՝ որոնք նախապէս լաւ արդիւնքով մասնակցած են դասընթացքին, զոնէ երկու անգամ: Նոյն զեղչը կը կատարուի նաեւ միասին յաճախող մօտիկ ազգականներէն մեկուն (ծնողք, քոյր, եղբայր, կողակից): **ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԱԿԸ Ո՞Չ ՄԷԿ ՊԱՐԱԳԱՅԻ ԿԸ ՓՈՒՏՈՒԻ ԵՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎՃԱՐՈՒՄԸ ՈՐԵՒԷ ՊԱՏՃԱՌՈՎ ՉԻ**

ՎԵՐԱԴԱՐՉՈՒԹԻՐ, բացի բժշկական վկայագրով հաստատուած հիւանդութեան պարագային: Դրամատնային փոխանցումին (bank transfer) համար, յետ դիմումին ընդունելութեան՝ քարտուղարությունը պիտի դրկէ Պո-Արաքս Ընկերակցութեան դրամատնային հաշուի հարկաւոր տեղեկությունները (հաշուեթիւ, IBAN եւլն.): Նոյնպէս պիտի ուղարկուի փոստային հասցէն՝ փոխագրերու ուղարկումին համար: **Դրամատնային կամ այլ կերպի փոխանցումի բոլոր ծախսերը** դիմողին կը պատկանին:

Կ'ընձեռուի բնակութեան հնարաւորութիւն՝ Վենետիկի պատմական կեդրոնին մէջ, օժտուած՝ խոհանոցային յարմարություններով:

Իւրաքանչիւր **ճաշ կամ ընթրիք**, որու ծախսը պէտք է ԱՆՉԱՄԲ հոգայ իւրաքանչիւր ընթացորդ, կրնայ արժել 13-18 Եւրոյ:

Կեցութեան ծախսն է՝ (31 Յուլիս-18 Օգոստոս, ներառեալ – 19 գիշեր)

✓ 1072,00 € անձ գլուխ, երկու հոգինոց սենեակի մէջ: Սենեակի ներառեալ ծառայություններ՝ զովասարքիչ, համացանց (internet), առանձին ճեմիչ եւ լուսացարան, խոհանոցային անկիւն: Սենեակին մէջ մազ չորցնող գործիք չկայ:

✓ 1530,00 € **մէկ** հոգինոց սենեակի մէջ: Սենեակի ներառեալ ծառայությունները ինչպէս առանձին սենեակին համար: Կեցութեան թեթեւ տուրք մը, Վենետիկի մէջ, 2011-էն սկսեալ, օրէնքով պարտադիր է եւ **ներառեալ է նշուած ընդհանուր սակին մէջ:**

Դասընթացքի **կեցութեան ծախսը կարելի չէ օրական դրութեամբ հաշուել՝ եթէ մէկը մի քանի օր նուազ պիտի մնայ:** Բոլոր անոնք որ կը փափաքին նշուած թուականներէն առաջ հասնիլ կամ աւելի վերջ մեկնիլ, **այդ յաւելեալ օրերուն համար** իրենց բնակավայրը պէտք է որ իրենք անձնապէս հոգան եւ:

գատեն վճարեն: Իսկ անոնք որ դասընթացքի օրերուն իրենց կեցութիւնը անձամբ պիտի հոգան ուրիշ տեղ, կը խնդրուի որ այս պարագան շուտով հաղորդեն դասընթացքի վարչութեան:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ պէտք է կատարել հետեւեալ կարգով՝

- **950 Եւրոյի բաժինը** պէտք է վճարուի **մինչեւ Ապրիլ 30:**
 - **600 Եւրոյի բաժինը՝ մինչեւ Յունիս:**
 - **Մնացեալը՝ կա՛մ դրամատնային փոխանցումով մինչեւ Յուլիս 10, կա՛մ հնչուն դրամով ժամանումի օրը արձանագրութեան պահուն:**
- Ո՞Չ Ո՞Ք ԿՐՆԱՅ ՍԵՆԵԱԿԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ ՍՏԱՆԱԼ, **եթէ մինչեւ արձանագրութեան պահը չէ վճարած բովանդակ պարտքը:**

Ջերմօրէն կը յանձնարարենք փախադրամիջոցներու համար **CARTA UNICA** գեղչաքարտի գնումը, որով Վենետիկի տարածքին երթելեկի գիները աւելի քան կը տասանորդուին:

Ամէն յաւելեալ տեղեկութեան համար գրել՝ info@padus-araxes.com հասցէին, cc: benedettacon@gmail.com եւ zkybhs@gmail.com. Անհրաժեշտութեան պարագային հեռաձայնել **Երեքշաբթի եւ Հինգշաբթի** օրերը, **ԻՏԱԼԱԿԱՆ ԺԱՄՈՎ, 10.30-էն մինչեւ 13.00** հետեւեալ բջջային համարին՝ +393791330687: ԼԱԲ ՍՏՈՒԳԵԼ ԶԵՐ ԵՐԿՐԻՆ ՆԿԱՏԱՍՐԲ ԺԱՄԵՐՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ: Պատասխան չստանալու պարագային՝ **WhatsApp**-ով լուր մը դրկել եւ ըստ հնարին շուտով պատասխան պիտի ստանաք:

Կազմակերպութիւնը պատասխանատու չէ տպագրական պատահական սխալներու նկատմամբ: